ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Շիրակի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1%-ով և կազմել է 92,4%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,3%-ով՝ կազմելով 95,9%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով՝ կազմելով 97,8%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել Գյումրու «Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա»ՓԲԸ-ում (76%), Գյումրու«Թիվ 1 պոլիկլինիկա»ՓԲԸ-ում (87,4%) և Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (88,6%), (Աղյուսակ 1):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,5%-ով և կազմել 92,4%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,5%-ով և կազմել 95,9%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Շիրակի մարզում՝ 27,3% :

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի



Գծապատկեր 2՝ 2019թ. Շիրակի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի